



«**ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ**»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցանող գնահատման սկզբունքները ֆիզիկայի ժամին

ԱՌԱՐԿԱ Ֆիզիկա

ՀԵՂԻՆԱԿ Ավետիսյան Սոնիկ

ՄԱՐԶ Արմավիրի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղարշապատի Հ.
Հովհաննիսյանի անվան հ. 3 դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
1. Հետազոտական համատեքստ	4
2. Ուսուցանող գնահատման սկզբունքները ֆիզիկայի ժամին	5
3. Հետազոտության ընթացք	10
4. Տվյալների վերլուծություն	12
Եզրակացություն	13
Օգտագործված գրականության ցանկ	14

Ներածություն

Մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ (այդ թվում՝ անհատական մոտեցումներ) ու հնարներ: Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել: Օրինակ, նրանք կարող են դժվարություններ ունենալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի հա մար նրանց պետք է օգնել՝ լրացուցիչ աջակցելով դպրոցում և համագործակցաբար աշխատելով ծնողների հետ: Երեխաների մի խմբի համար այդ դժվարությունները կարող են պայմանավորված լինել հաշմանդամությամբ, որը հանրակրթական ծրագրի յուրացումը դարձնում է ավելի բարդ:

Որոշ երեխաների համար այդ խնդիրները ժամանակավոր դժվարություններ են հանդիսանում, մինչդեռ մյուսների համար դրանք կարող են լինել երկարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիրներ: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1. երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մե թողական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,
3. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում, ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ ուսում-

նառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված, նկատվում են կայուն դժվարություններ: Այդ գնահատումների ուսումնասիրությամբ էլ հենց պայմանավորված է հետևյալ հետազոտական աշխատանքը, որտեղ մանրամասն ներկայացվելու են ուսուցանող գնահատման սկզբունքները ֆիզիկայի ժամին:

1. Հետազոտական համատեքստ

Դպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ: Որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, դասավանդող այլ ուսուցիչների և աշակերտի ծնողների հետ, ուսուցիչը որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլի մասին:

Երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, որը ներառում է երեխայի ուսուցիչների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների կողմից դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված:

Եթե կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում, ապա ուսուցիչը, համաձայնեցնելով երեխայի ծնողի հետ: Գնահատումն իրականացվում է երկու փուլով:

1. դպրոցական մակարդակի գնահատում, որն իրակա նացվում է հաստատության ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:

2. տարածքային մակարդակի գնահատում, որն իրա կանացվում է

տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը, և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը:

2. Ուսուցանող գնահատման սկզբունքները ֆիզիկայի ժամին

Ֆիզիկայի դասավանդման արդյունավետության համար կարևոր է ոչ այնքան սովորողի մտապահած տեղեկությունը, որքան նրա տրամաբանական, վերլուծական ունակությունը: Աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ, այլ նաև այդ գիտելիքները տարբեր բնագավառներում կիրառելու պրակտիկ կարողություններ և հմտություններ:

Ուսման նկատմամբ հետաքրքրությունը մասամբ կարելի է լրացնել հետաքրքրաշարժ ուսումնական նյութի ճիշտ և ժամանակին օգտագործմամբ, քանի որ հետաքրքրաշարժ հարցերի դիտարկումը սրում է աշակերտների ուշադրությունը, զարգացնում հետաքրքրությունը և նպաստում դասի արդյունավետության բարձրացմանը:

Դպրոցական պրակտիկայում հաճախ կիրառվում է գործնական մեթոդը (վարժություններ, գործնական աշխատանք, լաբորատոր աշխատանք, ճանաչողական խաղեր): Լաբորատոր աշխատանքը զարգացնում է տրամաբանական մտածողությունը և գործնական հմտությունը: Բարեխիղճ, սրտացավ, իսկական ուսուցիչը մտահոգվում է ոչ միայն ծրագրային նյութը խորապես ուսուցանելու, այլև աշակերտների սովորածի, յուրացրածի համար ճիշտ գնահատակն նշանակելու հարցով:

Այս առումով կարևորում են լաբորատոր աշխատանքների կազմակերպումը և գնահատումը: Լաբորատոր աշխատանքները սովորաբար կատարվում են յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունից և ամփոփումից հետո: Ցավոք, ոչ բոլոր դպրոցներում կան անհրաժեշտ քանակի ու որակի սարքավորումներ, ինչը հնարավորություն չի տալիս, որ աշակերտները մի քանի խմբերով կատարեն պահանջվող փորձերը, գործնական աշխատանքները: Որպեսզի լաբորատոր աշխատանքները կազմակերպվեն արդյունավետ և ծառայեն իրենց նպատակին, որպեսզի այդ առումով սովորողի գնահատականը լինի իրական, վարվում են ներքոնշված կերպ:

Թեման ուսուցանելուց և այն ամփոփելուց հետո լաբորատոր աշխատանքը չենք կատարում: Ուսումնասիրում ենք ևս երկու-երեք թեմա, դրանք ամփոփում, հետո միայն չկատարված երկու-երեք լաբորատոր աշխատանքները կատարում ենք իրար ետևից: Մինչ այդ սովորողներին նախապես պարտադիր

հանձնարարում եմ համապատասխան թեմաների կրկությունը, հետո դասարանը բաժանում եմ մի քանի խմբերի(ելենլով սարքավորումների քանակից), այնուհետև յուրաքանչյուր խումբը կատարում է տարբեր լաբորատոր աշխատանքներ:

Դրանից հետո հանձնարարում եմ՝ գրել հաշվետվություն: Այսինքն, յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է ուսումնասիրած օրենքի, երևույթի, սարքավորումների կիրառումը բժշկության մեջ, կենցաղային սարքերում, գյուղատնտեսական ոլորտում, տարբեր մեխանիզմներում՝ օգտվելով լրացուցիչ գրականությունից, համացանցից: Հաջորդ ժամին խմբերը կատարում են մյուս աշխատանքները: Ավարտելուց հետո լրացուցիչ մեկ դասաժամ հատկացնում եմ ընդհանուր ամփոփմանը և սովորողների գնահատմանը:

Համոզվելու եմ, որ այս դեպքերում գնահատականը լինում է հավաստի: Հաճախ ուսուցիչները աշխատանքի ավարտից հետո հավաքում են հաշվետվությունները և դրանց գնահատում: Հազիվ թե դա միշտ նպատակահարմար լինի:

Նախ, լաբորատոր աշխատանքները սովորաբար խմբերով են կատարվում, լավագույն դեպքում՝ երկուսով, և նրանց հաշվետվությունները նույնն են լինում: Բացի դրանից, հաշվետվությունը ոչ բոլոր դեպքերում է արտացոլում կատարված աշխատանքի որակը:

Օրինակ, մարմնի զանվածի թվային արժեքը կշռման ժամանակ կարող է ճիշտ ստացվել, սակայն աշակերտը հնարավոր է՝ աշխատանքի ընթացքում պահպանած չլինի կշռման կանոնները: Երբեմն ուսուցիչները աշակերտներին առաջարկում են, բացի աշխատանքը կատարելուց, լուծել մեկ կամ երկու խնդիր, որպեսզի ընդհանուր գնահատական նշանակելը հնարավոր լինի: Դրա հետ նույնպես չի կարելի համաձայնվել:

Նախ, աշակերտները, ձգտելով լավ գնահատական ստանալ, կշտապեն ավարտել աշխատանքը, և այդ դասի նպատակը, որ կանխավ դրել է ուսուցիչը, չի իրագործվի: Երկրորդ, լաբորատոր աշխատանքի պայմաններում խնդիրների լուծման ինքնուրույնությունն ապահովել հնարավոր չէ, և նշանակված գնահատականը չի համապատասխանի աշակերտների գիտելիքների իրական

պատկերին:

Գործնական աշխատանքների ժամանակ ես ստեղծում եմ պրոբլեմային իրավիճակ, այնուհետև առաջադրում եմ վարկածը, սովորողներն այդ ժամանակ փորձում են կանխատեսել դիտարկվող երևույթի ընթացքը, ֆիզիկական մեծությունների միջև գործող հնարավոր կապերը: Այնուհետև պլանավորում են

փորձի ընթացքը: Մեծ նշանակություն ունեն աշակերտների ինքնուրույն գործնական պարապմունքները:

Ի տարբերություն ընդհանուր լաբորատոր աշխատանքերի, որոնք կատարվում են ուսուցչի հսկողությամբ, գործնական պարապմունքների ընթացքում աշակերտն ավելի ինքնուրույն է: Նա կատարում է փորձը, չափումները և կազմում հաշվետվություն: Ես ցուցումներ եմ տալիս սարքերի գործադրման վերաբերյալ այնպես, որ յուրաքանչյուր աշակերտի մեջ զարգանան գործնական ճիշտ հմտություններ, խորհուրդներ եմ տալիս ստացված արդյունքները մշակելու, հաշվետվությունը կազմելու վերաբերյալ:

Աշխատանքի ընթացքում ես հեշտությամբ եմ նկատում, թե որ աշակերտն է լիարժեք կատարում իր գործը, որը՝ հապճեպ, ձևականորեն: Երբեմն հանձնարարում եմ կոնկրետ խնդրի ինքնուրույն տեսական լուծում և ապա կատարված փորձի միջոցով գտած լուծման ստուգում: Այդպիսի խնդիրներ հեշտությամբ առաջադրում եմ «Մեխանիկա» բաժնից: Իսկ ինչպիսին պետք է լինեն ֆիզիկայի գործնական աշխատանքների ծավալը, բովանդակությունը, բնույթը, որպեսզի դրանք նպաստեն դրված խնդրի իրագործմանը:

Գործնական աշխատանքները պետք է կազմեն լաբորատոր պարապմունքների համակարգի օրգանական մասերից մեկը: Պարզագույն սարքերով կատարվող աշխատանքների ընթացքում ձեռք բերած տարրական գործնական ունակությունները պահանջում են հետագա զարգացում և կատարելագործում: Յաճախ դասարաններում այն կարելի է բավարար համարել, բայց բարձր դասարաններում պետք է ծանոթացնել տեխնիկական ավելի բարդ սարքերին ու սարքավորումներին, ինչպես նաև ժամանակակից տեխնիկայում կիրառվող հետազոտություններին ու չափումներին:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:

Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման


համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Դպրոցական մակարդակի գնահատումը դիտարկման միջոցով կրթության առանձնա-հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին բազմաթույթ տեղեկությունների հավաքման, համակարգման և եզ-

րահանգումներ կատարելու մի գործընթաց է, որի արդյունքում սահմանվում է, թե ինչ է անհրաժեշտ երեխային դպրոցում, դասարանում, տանը, համայնքում՝ հետագա զարգացման և անկախ լինելու համար:

Դպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու համար Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակվել և ուսումնական հաստատություններին է տրամադրվել «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, որը թույլ է տալիս սահմանել այն ոլորտները, որտեղ երեխան ունի լրացուցիչ աջակցության կարիք, ինչպես նաև որոշել երեխայի ինքնուրույնության մակարդակը կամ պահանջվող աջակցության չափը:


Գծապատկեր 1. Գնահատման կազմակերպումը ֆիզիկայի ժամին



Այն կիրառվում է այն դեպքում, երբ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խումբն ունի երեխայի հետ կապված մտահոգություններ և ծնողը

գրավոր դիմում է դպրոցի տնօրենին, որպեսզի մանկավարժահոգեբանա կան
աջակցության խումբը իրականացնի դպրոցական մակարդակի գնահատում:

Գծապատկեր 2. Ֆորմատիվ գնահատման բաղադրիչները



Գոյություն ունեն մասնակիցների ակտիվության մի քանի ուղղություններ.

1.ուսուցման նպատակի ընկալում, սպասվելիք արդյունքներ,

2.գնահատման սկզբունքների իմացություն՝ մասնակիցների կողմից,

3.ուսուցչի կողմից արդյունավետ ուսուցման մեթոդի և եղանակի

ընտրություն:

3. Հետազոտության ընթացք

Յուրաքանչյուր նոր թեմա սկսում էմ որևէ հետաքրքիր փորձի նկարագրությամբ, պատահաբար արված հայտնագործությունների (լողացող մարմինների օրենք, ռենտգենյան ճառագայթներ, ռադիոակտիվություն, ատոմի կառուցվածք, շղթայական ռեակցիաներ և այլն) մասին պատմելով: Յուրաքանչյուր մարդու մեջ կա անբացատրելի հետաքրքրություն և դրական վերաբերմունք դեպի անսովորը: Յուցադրումը կատարում էմ ես՝ ընտրելով թեմայի հետ կապված պարզ, բոլորին տեսանելի, բովանդակալից և կարճատև (մի քանի րոպե) փորձեր: Յուցադրման ընթացքում ձևակերպում էմ ճանաչողական խնդիրը:

Օրինակ՝ <<Լողացող մարմինների օրենք>>, թեման անցնելիս կատարում էմ՝

1) ,«Ջրի մեջ վառվող մումը,, փորձը: Ջրի մակերևույթին ուղղաձիգ դիրքով լողացող մումի՝ ջրի մեջ գտնվող մասը արդյո՞ք կվառվի:

2) ,«Կշիռ ունի՞ արդյոք մանկական փուչիկի մեջ գտնվող օդը,,: Մագնիսականություն թեման անցնելիս կատարում էմ ,«Արդյոք մագնի՞ս է պողպատե ձողը,, ցուցադրումը:

Ձեռքի տակ ունենալով պողպատե ձող, սովորական կոճի թել և մի կտոր պղնձե հաղորդալար, որոշում ենք՝ ձողը մագնիս է, թե՞ ոչ: Տնային, արտադասարանական փորձերը պարզագույն, ինքնուրույն կատարելիք փորձեր են, որոնք սովորողները կատարում են տանը: Այդ աշխատանքների նպատակն է՝ ֆիզիկական երևույթները դիտելու, հմտությունների, ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորումը:

<<Օպտիկա>> բաժնի ուսումնասիրման ժամանակ հանձնարարում էմ՝ Գունավոր ապակիների միջով ինչպե՞ս տեսնել գունավոր բառերը, Գունավոր ստվերները փորձերը:

<<Մակերևույթային լարվածություն>> թեմայի ժամանակ

1) Լուցկու հատիկների տարօրինակ շարժումները,

2) Երկու գնդաձև, փակված ապակե փորձանոթներից մեկը լաված է ջրով,

մյուսը՝ սպիրտով: Առանց բացելու՝ ինչպե՞ս որոշել, թե որն է պարունակում
սպիրտ՝ ձեռքի տակ ունենալով միայն սեղանի լամպ:

<<Մեխանիկա>> բաժինը ուսումնասիրելիս աշակերտները սիրով են կատարում հետևյալ փորձերը:

1) Մեփական առավելագույն հզորության որոշումը օգտագործելով քանոն և բժշկական կշեռք:

Ցուցումներ – Հաշվելով սանդուղքի աստիճանների թիվը, որով հասցնում եք վագել ինչ-որ ժամանակում, չափելով յուրաքանչյուր աստիճանի բարձրությունը, գիտենալով ձեր մարմնի զանգվածը, կարելի է հաշվել հզորությունը:

2) Ընկնող փուչիկի շարժման օրենքի ուսումնասիրումը -Օգտագործելով քանոն, փուչիկ, վայրկենաչափ, հետազոտել ընկնող փուչիկի շարժման օրենքը:

Ցուցումներ – Փուչիկի շարժման օրենքը հետազոտելու համար չափել 1; 1.5; 2; 2.5 մ բարձրությունից նրա անկման ժամանակը: Կառուցել փուչիկի անկման ժամանակից կախված գրաֆիկը:

Ստուգողական հարցեր - Ինչո՞վ բացատրել փուչիկի և պողպատե գնդերի անկումների էական տարբերությունը՝

2) Ինչի՞ է հավասար ընկնող փուչիկի արագացումը:

3) Ձեռքի շարժման առավելագույն արագության որոշումը- Օգտագործելով թենիսի գնդակ, չափերիզ և վայրկենաչափ՝ որոշեցեք, ձեր ձեռքի շարժման առավելագույն արագությունը:

Ցուցումներ — Ձեռքի շարժման առավելագույն արագությունը կարելի է որոշել՝ գնդակը նետելով մարզահրապարակում: Ուղղաձիգ նետման դեպքում վերելքի և անկման ժամանակները իրար հավասար են: Ուղղաձիգ նետման դեպքում գնդակի սկզբնական արագությունը, իսկ հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետելու դեպքում չափել նաև թռիչքի հաստությունը:

Ստուգողական հարց — Տվյալ աշխատանքում ձեռքի շարժման առավելագույն արագությունը հաշվելիս ի՞նչ պարզեցնող ենթադրություններ ենք արել: Ընդհանրապես կատարվելիք քայլերը ուղղորդվում են իմ կողմից: Ես հստակեցնում եմ առաջարկվող գրականության, ինտերնետային հղումների և տեղեկատվության որոնման այլ աղբյուրների ցանկը: Իմ աշակերտները կարողանում են անդրադարձ կատարել և սխալներն ու դժվարությունները

մեկնաբանելու հստություններ ձեռք բերում:

4. Տվյալների վերլուծություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտազրոհն է: Մտազրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտազրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտազրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտազրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտազրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտազրոհի գրավոր տարբերակը: Իմ աշակերտները կարողանում են անդրադարձ կատարել և սխալներն ու դժվարությունները մեկնաբանելու հմտություններ ձեռք բերում: Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ գործնական աշխատանքները ուսուցման նպատակը լավագույն ձևով իրականացնելու համար եմ կիրառում, որոնց օգնությամբ աշակերտը կարող է տեսական գիտելիքները կիրառել իր պրակտիկ գործունեության տարբեր ոլորտներում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ գործնական աշխատանքները ուսուցման նպատակը լավագույն ձևով իրականացնելու համար եմ կիրառում,

որոնց օգնությամբ աշակերտը կարող է տեսական գիտելիքները կիրառել իր պրակտիկ գործունեության տարբեր ոլորտներում:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով հետազոտական աշխատանքը, եկանք այն եզրակացության, որ դպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Ինչպես գիտենք, ֆիզիկան գիտության բնագավառ է, որն ուսումնասիրում է տիեզերքում գործող հիմնական ուժերն ու օրենքները, բացատրում նյութի և էներգիայի հատկությունները, հետազոտում ատոմի մեջ գտնվող մանրագույն մասնիկներից մինչև մեր Տիեզերքի առաջացման հետ կապված երևույթները: Հունարեն «ֆիզիկա» բառը նշանակում է բնություն:

Ֆիզիկայի դասաժամին, աշակերտները հնարավորություն են ստանում հասկանալ ֆիզիկայի բույն խնդիրը, որն է բնության ընդհանուր օրենքները բացահայտելն է, դրանց միջոցով բնության մեջ տեղի ունեցող երևույթները բացատրելն ու մարդկությանը ծառայեցնելը: Այդպիսով, շատ կարևոր է ուսուցման փուլային պլանավորումը: Մենք հաճախ մտածում ենք, որ ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում-գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Այս առումով ներկայացնենք ուսուցման փուլային մի քանի տաքսոնոմիաներ:

Դրանք օգնում են ուսուցիչներին ուսուցումը տանել իմացության ցածր մակարդակից մինչև վարպետության բարձր մակարդակ: Այդպիսի աստիճանակարգում է, օրինակ, Միլլերի աստիճանակարգումը:

Պետք է հստակ գիտակցել, որ կրթության բնագավառում աշակերտներին խթանող համակարգը դա գնահատման համակարգն է, հետևաբար արդյունավետ և ճիշտ գնահատումը հնարավորություն կտա երեխային ապահովվել առավելագույն ուշադրություն տվյալ դասաժամի նկատմամբ և մեծացնել հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Красноборова А.А. Критериальное оценивание в школе. – Пермь, ПГПУ-2010. — С. 5.
2. Интегрированная модель критериального оценивания (ИМКО) в Назарбаев Интеллектуальных школах. — С. 3.
3. Политика оценивания учебных достижений учащихся Назарбаев Интеллектуальных школ в 2014-2015 учебном году. — С. 2.
4. Формативное оценивание в начальной школе. Практическое пособие для учителя/ Сост. О. И. Дудкина, А. А. Буркитова, Р. Х. Шакиров. — Б.: «Билим», 2012. – 89 с.
5. Dodge, Judith. 25 Quick Formative Assessments for the Differentiated Classroom. Scholastic, 2009.
6. Kellaher, Karen. 101 Picture Prompts to Spark Super Writing, Scholastic, 1999